18-
9

48 ՕԽԱՆՈՑ

ԴԼԽՈՒ ՓՈՐՁԱՆՔԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒ ԱՐԱՐ

Հայացուց

ՄԻՀՐԴԱՏ Մ. ՀԱՑԵՆԱՋՆ

Դերասան եւ Ցուցարար

Հրատարակիչ՝ ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Պապը Աղի, Ռէօիս էֆ. խաճ

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. «ԹԷՄՀԻԼԱԹ»

1930

ՄՍՏ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱՅԷԴԵՄԻԱ

A 29609

HARRY G. BEDERIAN
837 WASHINGTON ST.
BOSTON MASS.

ԱՆՁԻՆՔ

ԹՐԷՊՈՒՇԱՐՏ	29 տարեկան
ԲՐԻՒՏԷՆՎԱԼ	Րէմ քաղաքէն ծեր մը
ԲԻԳՈՒԱԶՕ	Վերի յարկի դրացին
ՊԼԱՆՇ	48 տարեկան Թրէպուշարտին աղջիկը
ԳԼԷՐ	18 տարեկան Բրիւտէնվալին »
ՐԱԿՕՖԻՆ	Թրէպուշարտին տղատուհին

Դէպքը Բարիզի մէջ տեղի կ'ունենայ։



(Վարագոյրը բացուելուն, սրահ մը, խորը պատուհանով դուռ մը, երկու աթկիւնները մէյմէկ դուռ, ձախ կողմը սեղան մը՝ վրան քանի մը շիշեր, թիկնաթոռ մը եւ աթոռներ).

Ա. ԱՐԱՐ

ՏԵՍԻԼ 1.

Բակոֆին (վերջը) *Թրէպուշարտ։* (յետոյ) *Բիւրուազոֆին ձայնը։*

ԲԱԿՕՖԻՆ. — (Մէկ կողմը պալքօնը աւլելով) *վա՜յ. վա՜յ, վա՜յ, պալքօնին մէջ ճիշդ 14 հատ սիկաստի աղտոտութիւններ, աս աղէկ բան. վրայի նըստող դրացիներուս ալ քովը ամչնալ, խպնիլ չկայ։ նեղուիլ, մարդ սեպել բնաւ չկայ, է՜յ այսչա՛փ ալ կ'ըլլայ մի եա...*

ԹՐԷՊՈՒՇ. — (Ձախ կողմի իր սենեակի դուռնեն ելլելով) *նորէն ի՞նչ կայ, ի՞նչ եղար Բակոֆին։*

ԲԱԿՕՖ. — (Պալքօնը ցուցնելով) *տեսէք, պալքօնը աղտոտութեան մէջ է, ճիշդ 14 հատ խմուած սիկար, այս քաշուելիք բան է Պարոն։*

ԹՐԷՊ. — *Ի՛նչպէս... ի՛նչպէս, 14 հատ, երէկ 13 հատ էր, երթալով կ'աւելնայ կոր. մարդ մը իր մոխրամանին մէջ անգամ կ'ամչնայ այդչափ սիկարի կտորուանք դնելու. աս աղէկ բան* (պալքօնը ելլելով դէպ ի վեր) *է՜յ, ինծի նայեցէք Պարոն։*

ԲԻԴՈՒ. — (Ներսեն) *ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզէք։*

ԹՐԷՊ. — *Պարո՛ն, կը խնդրեմ, խմած սիկարնիդ մեր պալքօնը մի՛ նետէք։*

ԲԻԴՈՒ. — *Ինչո՞ւ համար, ի՞նչ պատճառաւ։*

ԹՐԷՊ. — *Ի՞նչ ըսել է, ինչո՞ւ համար, ա՛ս աղէկ*

բան... որովհետև վայելուչ բան չէ, որովհետև աղտոտութիւն է... որովհետև հոգիս կը նեղանայ... փողոց նետեցէք էֆէնտիմ, փողոց, ամմա թօհաֆ պէ...

ԲԻԴՈՒ. — Անկարելի է Պարոն... փողոց նետելը արգիլուած է։

ԹՐԷՊ. — Ըսել է շարունակ այս աղտոտութիւնը պիտի քաշենք։ (Վար կ'իջնէ առաջ կուգայ)։

ԲԻԴ. — Այդ իմ գիտնալիք բանս չէ։ (Սիկառ մը եւս կ'իյնայ)։

ՐԱՖՕՖ. — Ա՛յ... առ մէկ եւս... եղաւ 15. (առաջ կուգայ)։

ԹՐԻՊ. — (Բարկացած), Պարոն... (Բակօֆինին) Բակօֆին, դուն սա սիկարները ժողվէ, ես հիմա անոր կը ցուցնեմ, ի՛նչ փորձանք է եղեր սա պէ՛...

ԲԻԴ. — Է՜ա՛լ դուք հոգիս նեղել սկսաք։

ԹՐԷՊ. — Ի՞նչ ըսաւ, ի՞նչ ըսաւ։

ԲԱԿՕՖ. — Հոգին կը նեղէք կոր եղեր։

ԹՐԷՊ. — Անգամ մը նայէ, տակաւին հոն է։

ԲԱԿՕՖ. — (Պալֆօնը ելլելով վեր կը նայի)։ Ո՛չ, Պարոն հոն չէ՛, քաշու

ԹՐԷՊ. — Ո՛չ, ոչ, չըլլայ օր որ բերնէդ փախ-ցընես... ես երթալէս վերջը անոր նամակ կը գրեմ, գործը եղածին պէս կը հասկնամ...

ՐԱԿՕՑ. — Ըսել է թէ միասին չպիտի տանիք։

ԹՐԷ. — Ո՛չ, ո՛չ... ապուշ գուն ալ ինքզինքդ պաշտպանէ, գրպանս գնելու չեմ ա՛, հայրս 29 տա-րեկան, իս աղջիկը 48 տարիքին մէջ։

ՐԱԿ. — Ահա՛, ինքն ա՞ կուգայ կոր։

ԹՐԷ. — Հրամմեցէք... փորձանքին մեծը հիմա է։

ՏԵՍԻԼ 2.

ՆՈՑՆՔ ԵՒ ՊԼԱՆՇ

ՊԼԱՆՇ. — (Աջ կողմի fուլիսեն իրեն սեցեակէն ելլելով եւ ձեռնոցները դնելով) բարի լոյս հայր։

ԹՐԷ. — Հա՛յր... (բարձր) բարի լոյս մատմազէլ։

ՊԼԱՆՇ. — Մատմազէ՛լ, ա՜հ, աղջիկս, չէ՞ք ըսեր, միթէ ինծի դէմ վշտացած է՞ք։

ԹՐԷՊ. — Ո՛չ... իմ մինի մինի աղջիկս, ո՛չ, իմ սիրուն պէպէ՞ս, (մեկուսի) ի՞նչ աղուոր ալ կը վայլէ կոր. եա՛...

ՊԼԱՆՇ. — Ձեզմէ բան մը պիտի խնդրէի, հայր։

ԹՐԷՊ. — Ի՞նչ բան աղջիկս։

ՊԼԱՆՇ. — Թոյլտուութիւն ընէիք որ գուրս ելլէի։

ԹՐԷ.— Անշուշտ, անշուշտ, ամէն ժամանակ ա-զատ է՞ք, որ ժամանակ որ փափաք ընէ՞ք, կրնաք ել-լալ, ձեզի միշտ թոյլտուութիւն։

ՊԼԱՆՇ. — Ո՞ւր երթալս չհարցնելով այսչափ թոյլատու գտնուելնուդ կը զարմանամ։

ԹՐԷՊ. — (Մեկուսի) ճէհէննէմին տակը գնա (բարձր) հա՛, այո՛, ո՞ւր պիտի երթաք, իմ սիրուն պէպէ՞ս։

ՊԼԱՆՇ. — Թաղարներու ծաղիկ առնելու համար մինչեւ ծաղիկներու «պաղաս»ը պիտի երթամ, այսինքն վաճառատեղին... սիրելի հայրիկս։

ԹՐԷՊ. — Շատ աղէկ... դայէք աղջիկս... (ժամացոյցը նայելով) ահա՛, ձեզի 5 ժամ միջոց...

ՊԼԱՆՇ. — Բայց, դուք ինծի չպիտի ընկերանաք։

ԹՐԷՊ. — Ո՛չ, աղջիկս։

ՊԼԱՇ. — Ինչո՞ւ համար։

ԹՐԷՊ.—Գործ մը ունիմ... մէկուն պիտի սպասեմ։

ՊԼԱՆՇ. — Ո՛չ, ո՛չ, անանկ չէ (urդողելով, նազ (ընելով) ես ձեզի նեղութիւն կը պատճառեմ կոր, անոր համար, այնպէս չէ...

ԹՐԷՊ. — Զարմանալի խօսքեր կ'ընես աղջիկս, կռնակս չպիտի ելլես ա՛։

ՊԼԱՆՇ. — Եթէ ձեզի նեղութիւն կը պատճառեմ կոր, ատոր ալ միջոցը կայ։

ԹՐԷՊ. — Ի՞նչ միջոց։

ՊԼԱՆՇ. — Ինծի ամուսին մը գտէք։

ԹՐԷՊ. — Այո՛, այո՛, կը նայինք, կը փնտռենք. մե կուսի) առնեն նէ աղէկ, — չորցած փայտը — (բարձր) թող Բակօֆէն միասին հետդ գայ։

ՊԼԱՆՇ. — Ինծի ծառային հետ կը զրկես կոր, կ'ըլլայ որ ինծի խօսք եայլն կը նետեն, ատոր համար կը վախնամ։

ԹՐԷՊ. — Մութին կ'ըլլայ այնպէս բան, բայց ցորեկ ատեն չեմ յուսար, աղջիկս. գլխարկդ, վզնոցդ եայլն դիր տէ գնա, բան մը չկայ։ (Պլանշ քիչ մը նազ կ'ընէ), է՛ հայտէ ըսինք ա՛ ես այնպէս կ'ուզեմ, պէտք է այնպէս ըլլայ (մեկուսի) թրէնը պիտի փախցնեմ։

ՊԼԱՆՇ. — (Գլխարկը առնելով) ես կը հնազանդիմ հայր. (Բակօֆին) քալէ, ապուշ արարած... մնաք բարով հայր...

ԹՐԷՊ. — (Կռնակը դարձնելով), երթաք բարով։

ՊԼԱՆՇ. — (Թրուած երեսով) զիս չէք դրկեր հայր...

ԹՐԷՊ. — Հա՛, կը ներէք աղջիկս, մոռցայ. (գըրկելով) կարծես թէ մեծ մայրս դրկեցի. (մեկուսի... (կ'երթան) :

ՏԵՍԻԼ 3.

ԹՐԷՊՈՒՇԱՐ (Առանձին)

ԹՐԷՊ. — (Ժողովրդեան) է՛հ, պարոններ, հիմա տեսանք, ահա այս իմ աղջիկս է. (ժամը նայելով) տակաւին 5 վայրկեան ժամանակ ունիմ... կեցէք սա պատմութիւնը ձեզի պատմեմ. ես, կծծի, բայց հարուստ ընտանիքի մը զաւակն էի, Բարիզի մէջ «Պիլարտօ» խաղալ սորվելով, ճիշտ 5 տարի ժամանակս անցուցի, առաւօտ մը հարստութիւնս աչքէ անցուցի, հնչուն դրամ ըլլալով 9832 Ֆր. 75 սանտիմ պարտքս եղաւ, դրամարկղիս մէջ երկու հատ «բիլիօ» և մէկ-ծրար սիկարի թուղթէն ի զատ բան մը չկար, ծխախոտ ալ նանայ... յուսահատութենէս գլուխս գետինը զարնելու միջոցիս՝ յանկարծ սենեակիս դուռը զարկին, մտէք ըսի. կին մը ներս մտաւ, այս կինը լէմոնաթ ծախող որբևայրի կին մըն էր, որ՝ երեք չորս ամիսէ ի վեր առանց դրամի անկուտիարար լէմոնաթ խմելու համար աչք, յօնք ընելով, իրեն սիրահարած ըլլալս իբր թէ կը յայտնէի, և այս կինը ինծի յայտնեց թէ Պ. Թրէպուշարտ՝ ես ամբողջ պարտքերդ հատուցի և մուրհակներդ ազատեցի... ի՞նչ երջանկութիւն, ի՞նչ աղուոր բան... անոր եռեւէն դուն իմ սիրտս դրաւեցիր, իմ սիրոյս արժանի ես, ես քեզի հետ պիտի ամուսնանամ չըսէ՞ մի... վա՛յ չունչանորդի... պա-

տասխան ըլլալով. մայրիկս այս առաջարկնիդ ինծի համար մեծ բարեբախտութիւն մըն է. ես ալ կը փափաքիմ, բայց ես չեմ կրնար ամուսնանալ ըսի. անանկ է նէ, կամ պարտքերդ կը վճարես և կամ ինծի հետ կ'ամուսնանաս չըսէ՞ մի... ես արդէն անկարող այդ պարտքերը վճարելու... է՛, ինչ կ'ըլլայ նէ թող ըլլայ ըսի և չընդունեցի. բերանը չբացաւ, շիտակ ոտիկանատուն գնաց, և ինծի բանտարկել տուաւ իբրեւ անանկ, ի՛նչ օգուտ, 91 օրը՝ քաշելու է եղեր. Առաջին ամիսը անցուցինք առանց ծխախոտի, երկրորդ ամիսը որ մտանք յուսահատութիւնը սկսաւ, ինքնիրենս ըսի, ասան դուն ալ, սա կինը իրաւ է թէ տարիքոտ է՝ բայց հոդ չէ ըսի, և գրիչը ձեռքս առնելով սապէս գրեցի. «Աղուորս» ալ երկար ժամանակ առանց քեզի չեմ կրնար ապրիլ, քեզի հանդէպ սէրս անհուն է, օդնութեան հասիր. ութը վերջը ամուսնացանք. երկու տարի վերջը սիրելեալ ամուսինս արքայութիւն փոխադրուեցաւ, երկա՛ր, ասա շատ երկար չունչ մը քաշեցի, որովհետեւ համարձակութիւնս ստացայ, բայց քանի որ միտքս կ'իյնար յուսահատութիւնը կը կոխէր, ինչու որ մեռնողը «բիւսկիւլի« փորձանք մը գլուխս փաթթած և այնպէս չուած էր անդիի աշխարհք, քիչ առաջ տեսած այն աղջիկը ինծի ձգած էր. այս աղջիկը առջի երկնէն օժիտ ըլլալով միասին բերածէ ր 48 տարեկան գլխու փորձանք մը, ամէնուն քովը ինծի հայրիկ չկանչէ՞ մի... քայլս փողոց նետածիս պէս, օձիքս չի ձգեր, թուխալի պէս կը բակի, բարեկամներէս մէկուն տալ ուզեցի, մարդը եկաւ, տեսնելուն պէս ինծի մենամարտի հրաւիրեց։ Այս փորձանքին վնասը միմիայն իրեն ըլլայ նէ ինչ որ է. չէ՛, ամենեւին, ինծի ալ ճիշդ 6 ամուսնութիւն կորսնցնել տուաւ. խօսքը կ'ըլլայ կը լմննայ, ինքզինքս կը հաւնեցնեմ։ այս փոր-

ձանքին վիճաբանութիւնը մէջտեղ դրուելուն պէս գործը կ'աւրուի, անոր համար այս անգամ շատ զգուշութեամբ շարժեցայ. այս տեղէն հեռու Ռէմ քաղաքը աղջիկ մը գտայ, անունը Գլէր է, հօրը անունը Բրիւնտէվալ, 18 տարեկան անուշիկ, սիրունիկ աղջիկ մը. մայրը մեռած՝ առջեւնուս շաբաթը հարսնիքը պիտի ընենք Ռէմի մէջ. հայրը ըսաւ որ Բարիզի մէջ լմընցընենք, բայց աշխատեցայ արդիլել, ոչքովհետեւ 48 Օխանոց Փորձանքը տեսնելուն պէս գործը ինքնին օդը պիտի թռի, հարսնիքը ըլլալէն ետքը կ'առնեմ Բարիզ կը բերեմ, վերջը գործը պիտի հասկցուի եղեր որու հոգ. (ժամը կը նայի) վա՜յ, թրէնը պիտի փախցընենք (սեղեակէն «պաուլ»ը կ'առնէ):

ՏԵՍԻԼ 4.

ԹՐԷՊՈՒՇԱՐՏ, ԲՐԻՏԷՆՎԱԼ, ԳԼԷՐ

ԲՐԻՏ. — (Դուրսէն) չնորհակալ եմ, չնորհակալ եմ։

ԹՐԷՊ. — (Ետ դառնալով) այս սրինգի նմանող ձայնը որուն է կեցիր նայինք. (դուրսէն նայելով) անոնք են, այս, նշանածս ու հայրը. (ետ գալով) ահա, հիմա »հապ»ը կլլեցինք։

ԲՐԻՏ. — (Ձեռքը բաֆէքներ աղջկանը հետ ներս կը մտնէ) միւսիւ Թրէպուշարտ, փեսաս... հա՛, բարի լոյս, ես և աղջիկս.

ԹՐԷՊ. — (Բարեւելով) աներ հայրս, և օրիորդը, (մեկուսի)) Պլանշին դուրս ելլելը աղէկ եղաւ։

ԲՐԻՏ. — Ռեմէն կուգանք կոր։

ԹՐԷՊ. — Ես ալ հոն կուգայի կոր (ժամը նայելով) ճիշդ ժամանակն է, հրամմեցէք երթանք։

ԲՐԻՏ. — Ի՛նչ հարկ կայ, քանի որ մենք եկանք։

ԳԼԷՐ. — Զէի՛ք յուսար որ դանք։

ԲՐԻԻ. — Մի՛թէ գալերնուս վշտացաք։

ԹՐԷՊ. — Վշտանալ, քաւ լիցի. բայց մեր որոշումը ուրիշ էր առոր համար։

ԲՐԷԻ. — Իրաւունք ունի՛ք՝ տեսէ՛ք ինչպէս եղաւ։ Թող աղջիկս պատմէ։

ԳԼԷՐ. — Ո՛չ, դուք պատմեցէ՛ք։

ԹՐԷՊ. — (Ինքնիրեն) Պլանշին գալը մոռացաւ։

ԲՐԻԻ. — Գիտէ՛ք որ ես հիւանդ եմ։

ԹՐԷՊ. — Զէի գիտեր։

ԲՐԻԻ. — Երեք անգամ Բէմ գալերնուդ, երեք անգամուն ալ ձեզի զուրցեցի։

ԹՐԷՊ. — Այո՛, այո՛, միա՛ք եկաւ, շատ եղէկ։

ԲՐԻԻ. — Ինծի հարցնելու ըլլա՛ք թէ ի՞նչ կ'ըզգա՛ք կերակուր կերած և կամ չկերած ժամանակս, բան մը կ'զգամ, բան... այսինքն... բան... ահա զգացածս ես ալ չեմ հասկնար, աղջիկս ալ չհասկցաւ, բժիշկն ալ չհասկցաւ։

ԹՐԷՊ. — Այո՞, ես ալ չհասկցայ։

ԲՐԻԻ. — Աղջիկս դարձաւ ըսաւ որ...

ԳԼԷՌ. — Բարիզ երթանք անգամ մը «քոնսուլթա» ընել տանք ըսի. աղէկ չըսի՞ մի՞...

ԹՐԷՊ. — Աղէկ մտածեր է՛ք (մեկուսի) մտածած չըլլայիր։

ԲՐԻԻ. — Երկու թուչունը մէկ քարով կը զարնեն՝ ըսի, թէ ինքզինքս բժիշկին կը ցուցնեմ, և թէ հարանիքը կը կատարեն՝ ։

ԹՐԷՊ. — Աղէկ կ'ըլլայ Պարոն...

ԲՐԻԻ. — Սա «պաուլ»ը տեղ մը գնէի։

ԹՐԷՊ. — Ատկէ դիւրին ի՞նչ կայ, ձեզի մինչեւ Լիւքսէնպուկ պանդոկը կ'ընկերանամ։

ԲՐԻԻ. — Լիւքսէնպո՞ւրկ մի... ո՛չ պարոն, մենք ձեր տունը հիւր մնալ կ'ուզենք։

ԹՐԷՊ. — Հա՛, մի՛ շուարիր, մենք լուր առինք.

առջի ամուսինէդ մէկ հատ աղջիկ զաւակ մը ունենալ-նիդ ինչո՞ւ ծածկեցիք մենէ, ինչու՞ չի զուրցեցիք։

ԹՐԷՊ. — (Ինքնիրեն) «Ֆիլիպ»ը ծայր տալ սկսաւ (բարձր) այո՛, մոռցայ պարոն։

ԲՐԻՒ. — Վնաս չունի, ձեր ամուսնութեանը արգելք մը չի կրնար ըլլալ։

ԳԼԷՌ. — Անտարակոյս...

ԹՐԷՊ. — (Ինքնիրեն) ամաչ ընդունեցին։

ԲՐԻՒ. — Ես ու աղջիկս փոքրիկ տղաքը վերջին աստիճան կը սիրենք, հիմա ո՞ւր է տղեկը...

ԹՐԷՊ. — Տղե՞կը մի... հա՛, բան, կը քնանայ...

ԳԼԷՌ. — Կաթէն կտրա՞ծ է...

ԹՐԷՊ. — Մօտերս... միտք ունինք։

ԲՐԻՒ. — Քանի՞ ակռայ ունի։

ԹՐԷՊ. 38... ա՜հ, ա՜հ, չուարեցայ։..

ԲՐԻՒ. — Հա՛, հա՛, հա, այդ տարիքին մէջ... կաթի ակռայ ըլլալու է...

ԳԼԷՌ. — Արթնցած ատենը կը փափաքեմ գրկել ու համբուրել...

ԹՐԷՊ. — Ես ալ նոյնպէս...

ԳԼԷՌ. — Ցատկապէս անոր համար գլխանոց մը բանեցայ։

ԲՐԻՒ. — Ես ալ իմ կողմանէս...

ԹՐԷՊ. — Դուք ալ նուէր մը բանեցաք...

ԲՐԻՒ. Չէ ճանըմ, շաքարէ պէպէք մը բերի...

ԹՐԷՊ. Շատ շնորհակալ եմ...

ԲՐԻՒ. — (Աջ կողմը պայուսակը դնելով) սա պայուսակս և ծրարներս դնելու տեղ մը չցուցուցի՞ք։

ԹՐԷՊ. —)Ձախ կողմը երկրորդ fուլիսը ցուցնելով), ահա պարոն... ձեր սենեակը... հրամմեցէք օրիորդ, ձեզի մինչեւ սենեակ առաջնորդեմ...

ԳԼԷՌ. — *Տղէկը արթննալուն պէս ինծի իմաց տուէք*, (իրեցց սենեակը կ'երթան) Գլեռ եւ Թրէպուշարս :

ՏԵՍԻԼ 5.

ԲՐԻԻՏԷՆՎԱԼ, ՊԼԱՆԵ, ՐԱԿՕՖԻՆ

ԲՐԻԻ. — (Պայուսակը եւ ծրարները առնելով) *ալ հիմա մեծ հայրիկ կ'ըլլամ կոր. Պարոն Թրէպուշարի տակաւին ակռաները չբուսած են մինի մինի պէպէքը ծունկերուս վրայ առնելով պիտի խաղցնեմ. ես փոքրիկները մինչեւ վեց տարեկաններին շատ կը սիրեմ, անկէ վերջը չեմ սխորժիր* (կը պատրաստուի ենթարկու այն միջոցին աջ կողմի խորի դուռնեն Ռակօֆինի հետ Պլանշ կը մտնէ, Ռակօֆինի ձեռքը ծաղիկի փունջեր ըլլալով) :

ՊԼԱՆԵ. — *Կամաց... կամաց... ապուշ։*

ՐԱԿՕ. — *Մի՛ վախնաք Օրիորդ... մի՛ վախնաք։*

ԲՐԻԻ. — (Տեսնելով) *վա՜յ... տիկին մը...*

ՊԼԱՆԵ. — *Այս Պարոնը...* (իրար կը բարեւեն)։

ՐԱԿՕ. — *Ա՜ռ ո՞վ է...*

ԲՐԻԻ. — *Պարոն Թրէպուարը կ'ուզէք Տիկին.*

ՊԼԱՆԵ. — *Հրամանքնիդ...*

ԲՐԻԻ. — *Ո՛չ Տիկին, ես չեմ, ես Բրիւտէնվալն եմ, Ըէմցի...*

ՊԼԱՆԵ. — *Ի՞նչ հրամմեցիք։*

ԲՐԻԻ. — *Նստեցէք Տիկին, հիմա կը կանչեմ* (պօռալով) *Թրէպուշարտ... Թրէպուշարտ...*

ՊԼԱՆԵ. — *Ռակօֆին, այս ծաղիկները իմ սենեակս տար.* (Ռակօֆին աջ կողմի առաջին fուլիսը կը մտնէ) :

ԲՐԻԻ. — *Իր սենեակը մի՞... ըսել է այս կինը*

այս տան մէջ կը բնակի (պօռալով) Թրէպուշարտ... Թրէպուշարտ... (մեկուսի) Թրէպուշարտին մայրը ըլ-լալու է, քիթէն յայտնի է...

ՏԵՍԻԼ 6.

ՆՈՑՆԻՒ ԵՒ ԹՐԷՊՈՒՇԱՐՏ

ԹՐԷՊ. — (Գլուխին սեղեակեն ելլելով) զիս կանչեցիք... (մեկուսի) վա՜յ Պլանշը եկեր...

ՊԼԱՆՇ. — Ճիշդ երեք ծաղկամանի տնկելիք ծաղիկ բերի։

ԹՐԷՊ. — Աղէկ... աղէկ... (մեկուսի) արդեօք հայրս ո՞ւր է ըսաւ.

ԲՐԻԻ. — (Կամաց մը Թրէպուշարտին) Տիկին՝ մայրերնիդ եկաւ տնոր համար ձեզ կանչեցի...

ԹՐԷՊ. — Շատ լաւ ըրիք Պարոն...

ԲՐԻԻ. — Մայրերնիդ ըլլալը շուտ մը քիթին ձեւէն հասկցայ...

ԹՐԷՊ. — Շատ սրամիտ էք Պարոն (կամաց մը Պլանշին) Պլանշ, դուն սենեակդ գնա,

ՊԼԱՆՇ. — Այս պարոնը ո՞վ է։

ԹՐԷՊ. — Բարեկամս է... ո՛չ, ո՛չ, դերձակս է...

ԲՐԻԻ. — Ինծի չներկայացնէք։

ԹՐԷՊ. — Որո՞ւ...

ԲՐԻԻ. — Մայրիկիդ...

ԹՐԷՊ. — Ա՛հ, այո՛, հիմա...

ՊԼԱՆՇ. — (Բրիւտէնվալին). Պարոն, չինած վերջի ժիլէյին կոճակները...

ԲՐԻԻ. — Ի՞նչ կոճակի...

ԹՐԷՊ. — Ո՛չ Պարոն... ձեզի չէ՛...

ԲՐԻԻ. — Բայց, զիս չներկայացնէք։

ԹՐԷՊ. — (Պլանշին) բարեկամս Պ. Բրիւտէնվալը

ձեղ կը ներկայացնեմ, Բէմցի... (կամաց) *դուն կամաց մը սենեակդ քաշուէ...*

ԲՐԻԻ։ — Շատ շնորհակալ եղայ, Տիկին։

ՊԼԱՆՇ. — Տիկի՞ն մի...

ԲՐԻԻ. — Պէպէքին համար խաղալիքներ բերի։

ՊԼԱՆՇ. — Պէպէք մի՞...

ԲՐԻԻ. — Մեծ հայրիկը և մեծ մայրիկները ձեռք ձեռքի կրնան տալ (ձեռք կ'երկնցնէ եւ Թրէպուշարս կը սեղմէ)։

ՊԼԱՆՇ. — Ի՞նչպէս...

ԲՐԻԻ. — (Քրախոտին տուփը երկնցնելով) *Տիկին, քթախոտ մը կը քաշէ՞ք...* (Թրէպուշարս՝ Պլանշը կը հրէ եւ տուփը կ'առնէ)։

ԹՐԷՊ. — Սենեակդ քաշուէ կ'ըսեմ կոր քեզի։

ՊԼԱՆՇ. — (Մեկուսի) *դաղտնիք մը կայ հոս։* (Բրիւտենը բարեւելով) *Պարոն.*

ԹՐԷՊ. — *Տիկին...* (Պլանշ աջ կողմի առաջին դուլիսը կ'երթայ)։

ՏԵՍԻԼ 7.

ԲՐԻԻՏԷՆՎԱԼ, ԹՐԷՊՈՒՇԱՐՏ

ԹՐԷՊ. — (Ինքնիրեն) *ո՛ւֆ... տաքութիւն կոխեց։*

ԲՐԻԻ. — Տիկին, մայրերնիդ թուղթ խաղալ գիտէ՞...

ԹՐԷՊ. — Շատ աղէկ կը խաղայ, Պարոն։

ԲՐԻԻ. — (Ժամը նայելով) *օ՛... ժամանակը մոտեցեր է... ներողութիւն, երթամ ածիլուիմ։*

ԹՐԷՊ. — (Մեկուսի) *փողոց պիտի ելլայ, աս աղէկ։*

ԲՐԻԻ. — *Մայրիկիդ բարեւներս, երեկոյին կը տեսնուինք, «բրէֆա մը կը խաղանք, հիւանդութիւնս անոր ալիմացնել կ'ուզեմ* (ձախակողմի fուլիսը կը մտնէ :

ԹՐԷՊ. — *Շատ լաւ Պարոն։*

ՏԵՍԻԼ 8.

ԹՐԷՊՈՒՇԱՐՏ

ԹՐԷՊ. — *Վա՜յ, Աստուած պէլան տայ սատանկ բանին, վերջը ի՞նչ պիտի ըլլայ, հապա մեր պզտիկ պէպէ.քը տեսնել ուզեն նէ, ո՞վ ցուցնելու է. կաթէն չկտրուած այս 48 տարեկան պէպէ.քը... ահա դարձեալ ամուսնութիւնը օդը ելաւ, այս ութերորդը պիտի ըլլայ, ի՞նչ ընելու է... մէկուն դլուխը փաթթելու է, ո՞վ ըլլայ նէ ըլլայ։ Զինաստանցի, Հնդկաստանցի, Պուխարայի առներ հետը տանէր. հա՜յ, չար սատանայ* (կը պտտի, այդ միջոցին պալէօցին վրայ թիւթիւնի չբպուխի լիւլէ մը կ'իյնայ կը կոտրի :

ԲԻԲՈՒ. — (Ներսէն) *վա՜յ, շունչանորդի, հին բիբօս կոտրեցաւ։*

ԹՐԷՊ. — (Բարկացած) *է՜յ, ալ հիմա կը ճաթիմ, հիմա ալ բիբօն նեռեց* (պալէօցը ցատքելով) *Պարոն, խմուած սիկարանիդ, բիբօնիդ մեր պալքօնը նետելէն վաղ չպիտի՞ անցնի.ք...*

ԲԻԲՈՒ. — *Եթէ այդչափ հոդինիդ կը նեղուի նէ, պալքօննիդ ատկէ վերուցէ.ք...*

ԹՐԷՊ. — *Ապուշ է, խենդ է, ի՛նչ է...*

ԲԻԲՈՒ. — *Է՛հ, ալ զէվզէ.քութիւն, հօպպայութիւն է ըրածդ...*

ԹՐԷՊ. — *Պարոն, բերանդ քեզ ժողվէ... բերանդ ժողվէ, քեզի հետ փորձանքի կը մտնենք հա՛...*

ԲԻՐՔՈՒ. — Է՛հ, ալ երկան ըրիր ըսինք ա՛...

ԹՐԷՊ. — (Առաջ գալով) անկիրթ, յիրբ, անտամոթ, (մտածելով) սա մարդուն գլուխը փորձանք մը բերեմ, արդեօք ի՞նչ ընեմ... հա՛ գտայ, գտայ... մեր Պլանչէն աւելի մեծ փորձանք չի կրնար ըլլալ, ա՛խ, հաճոզելու ըլլամ տէ, սա 48 օրտա բերը կոնակը բերուցընեմ, (պալէօցը ելլելով) Պարոն, Պարոն։

ԲԻՐ. — Ի՞նչ կայ...

ԹՐԷՊ. — Կը խնդրեմ, քիչ մը վար կուգաք։

ԲԻՐ. — Ի՞նչպէս... վար գամ, որպէս զի ելլէք գլխուս բան մը իջեցնէք։

ԹՐԷ. — Ո՛չ, Պարոն, ո՛չ, ձեզի հետ կարեւոր բանի մը վրայ պիտի խօսիմ։

ԲԻՐ. — Քիչ մը սպասեցէք, հագուիմ...

ՏԵՍԻԼ 9.

ԹՐԷՊՈՒՇԱՐՏ. յետոյ ԲԻՔՈՒԱԶՕ

ԹՐԷՊ. — Հիմա հոս պիտի գայ, տեղ մը չի կենար, կը պտտի, զբօսաշրջիկ է մարդը...

ԲԻՔ. — — (Ձեռքը բիբօլը փայտ մը, կռնակը քաբօս մը, ճերմակ բանթալօն հագած, աջ դուռնեն կը մըտնէ), տեսնենք, ի՞նչ է ան զուրցելիքդ...

ԹՐԷՊ. — Ձեր այդչափ շատ ծխելը տեսնելով, ինքնիրենս ըսի թէ անպատճառ այս պարոնը բան մը ունի, այսինքն՝ «մէրսաք» մը ունի, հոգիի նեղութիւն մը ունի։

ԲԻՔ. — Գօրինին կը սպասէի։

ԹՐԷՊ. — Այդ Գօրինը ո՞վ կ'ըլլայ կոր։

ԲԻՔ. — Կար կարող կին մը։

ԹՐԷՊ. — (Խնդալով) հա՛ հա՛, հա՛, որչափ սատանայ իք, ի՞նչ որ է, ինչաս չունի, աղջկան հայրը

եղող մէկը սանկ բանեբու աչք դոցելու է, ձեզի սա պիտի հարցնէի թէ ամուսնացա՞ծ էք։

Բիրբ. — Ո՛չ...

Թրէպ. — Տակաւին հոս պիտի կենաք, լսածս զբօսաշրջիկ էք եղեր։

Բիրբ. — Տասը օրի չափ եւս։

Թրէպ. — Ձեզի բան մը պիտի ըրուցեմ. բան, ը... կնոջիր մոռցայ... ո՛չ, ո՛չ... միտքս եկաւ... ձեզի ամուսնացնելու փափաք մը ունիմ, ի՞նչ կ'ըսէք... վերջին ծայր գեղեցիկ, բարեկիրթ աղջիկ մը.... օ՜... ձեռքէն գծագրութիւն չինել ալ կուզայ... դաշնակ ալ կը չալէ։

Բիրբ. — Ինչո՞ւս պէտք, ի՛նչ կ'ուզէ թող չալէ։

Թրէպ. — 100,000 ֆր. ալ օժիտ ունի։

Բիրբ. — (Ցլեսվ ամա՜ն, ի՛նչ ըսիք...

Թրէպ. — 100,900 ֆր.ք

Բիրբ. 100,000 ֆր., ի՞նչ կ'ըսէք.

Թրէպ. — (Մեկուսի) բռնկեցաւ, (բարձր) ճշմարտութիւնն է որ կը ղուրցեմ.

Բիրբ. — Եթէ ամուսնանամ, այդ հարստութեան պիտի տիրանամ...

Թրէպ. — Անկասկած... անշուշտ... անտարակոյս...

Թրէպ. — Այնչափ ալ շատ պզտիկ չէ։

Բիրբ. — Իմ միտքս Գօրինը առնել էր, բայց անկէ վաղ անցայ... արդեօք կրնամ տեսնել. քանի տարեկան կայ, պզտի՞կ է։

Բիրբ. — Սանկ երկայնահասակ չէ՞ մի, աւելի աղէկ գովեցիք ա՛... ես արդէն դարճահասակներէն չեմ ախորժիր, մեր Գօրինը 6 ձեռք չափէն աւելի չկայ...

Թրէպ. — Պարոն... ալ ինձմէ ախորժիլ սկսաք, այնպէ՞ս չէ...

Բիրբ. — Հարկաւ, Պարոն, դուք ինծի 100,000

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԻՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ
A 29609 II

ֆրանքով դեղեցիկ, թարմ աղջիկ մը կ'առաջարկէք կոր, ի՞նչ ըսել է ձեզմէ չախորժիլ։

ԹՐԷՊ. — Ա՛... բայց գործը չիսառնեն.ք, իսկականը նայինք, այնչափ քլ թարմ չէ։

ԲԻՐ. — Գործին մէջ կեղծիք չըլլայ...

ԹՐԷՊ. — Ո՛չ, Պարոն, կը ներէք, տեսէք ես չեմ ընդունիր առանկ բաներ։

ԲԻՐ. — Շա՛տ աղէկ, շա՛տ աղէկ, քանի որ դիս կը վստահացնէք։

ԹՐԷՊ. — Ես հիմա դայն կ'առնեմ կուգամ, բայց սիկարդ մարէ.

ԲԻՐ. — Ատիկա ինչո՞ւ համար։

ԹՐԷՊ. — Առաջին անգամ է որ դիտի տեսնուիք, վայլում չառներ, անոր համար կ'ըսեմ։

ԲԻՐ. — Իրաւունք ունիք բարեկամս... խելքս Գօրինին դնայ... որովհետեւ անիկա կը թոյլատրէր ծխելու։

ԹՐԷՊ. — Հա՛... ինծի նայէ... այլեւս Գօրինին խօսքը բերանդ մի՛ առներ...

ԲԻՐ. — Բայց կնկան մը համար ալ այսչափ չարչարանք չի քաշուիր ա՛...

ԹՐԷՊ. — Հապա 100,000 ֆր.ը։

ԲԻՐ. — Իրաւունք ունիս, ես ատիկա մոռցած էի, շատ աղէկ բերանս չեմ առներ անունը։ (Թրէպուշարս Պլանշիճ սեղեակը կը մտնէ) :

ՏԵՍԻԼ 9.

ԲԻՐՈՒԱԶՕ

ԲԻՐ. — Սա մարդուն մէկէն ի մէկ ըրած քոմբլիմէնները ստամոքսդ խառնեց, 100,00 ֆր. օժիտը 5000 ֆր. եկամուտ ըսել է, մէկ ալ իմ հարստութիւնս կ'ընէ

երկու, ըսել է երկու զաւկի տէր կրնամ ըլլալ, մէկը փաստաբան կ'ընեմ, միւսն ալ ճիաւոր. անանկ է եա՛... (ծխելով)) պոբլիկ աղջիկը ինծի պատուհանը սեռած ըլլալու է ծխած ատենս, բայց ուր մնացին (հայելիին առաջը անցնելով վրան գլուխը կը շտկէ) :

ՏԵՍԻԼ 11.

ԲԻՐՈՒԱԶՕ, ԹՐԷՊՈՒՇԱՐՏ, ՊԼԱՆՇ

ԹՐԷՊ. — (Պլանշին ձեռքեն քաշելով) *գլուխդ վեր բռնէ, քովընտի կեցիր, հարիւրին յիսուն պիտի շահիս։*

ԲԻՐ. — (Պեխերը շտկելով) *ահա ինքը.* (մօտենալով) *հրեշտակս, իմ վառած, կրակոտ սիրոս.* (մէկէն իմէկ ասդին ցատկելով) *տսիկա բաւական տարբերութ է, սխալեցանք։*

ԹՐԷՊ. — *Աղջիկս, Օր. Պլանշը ձեզ կը ներկայացնեմ։*

ԲԻՐ. — *Աղջի՞կը մի...* (բարձր) *Պարոն դուք շատ կանուխէն սկսեր է.ք։*

ԹՐԷՊ. — *Բայց...* 100,000 *ֆր.ը մոռցա՞ք միթէ...*

ԲԻՐ.:— *Օրիորդ... հաւատացէք որ...* (Թրէպուշարտին) *չէ, չպիտի կարողանամ, շատ անցած է, շատ։*

ԹՐԷՊ. — *Աղջիկս սրտին բաբախումէն չի կրնար կոր մինքը բացատրել, անոր տեղը ես ղրուցեմ, սիրելի աղջիկս, ալ ձեր ամուսնութեան ժամանակը եկած է։*

ԲԻՐ. — (Ինքնիրեն) *շատ ուշ մնացեր է։*

ԹՐԷՊ. — *Ահաւասիկ այս Պարոնը* (Բիֆուազօին) *անուններիդ։*

ԲԻՐ. — *Բիքուազօ։*

ՊԼԱՆՇ. — Ի՞նչ գեղեցիկ անուն։

ԹՐԷՊ. — Ահա այս Պարոն Բիբուաղօն ձեզ տեսնելուն պէս իր սրտի բաբախումը չկրցաւ զսպել։

ԲԻԲ. — (Ցած) մի աճապարեր։

ԹՐԷՊ. — Տեսէք ի՛նչպէս անհամբերութիւն ցոյց կուտայ. ձեզմէ պատասխանի մը կ'սպասէ։

ՊԼԱՆՇ. — Հօրս հրամանները իբրեւ պատգամ կ'ընդունիմ...

ԲԻԲ. — Փայտ մի՛ ըսեր... փայտ օղլու փայտ։

ԹՐԷՊ. — Առաջարկէ հա՛... գործը տաքցած է, միայն առաջարկէ...

ԲԻԲ. — (Պլանշին ճայելով) սա կայ որ... այսինքն... է՛յ... ներսէս չի դար, զօրով է. (Թրէպուշարին) քանի՞ տարեկան կայ։

ԹՐԷՊ. — 100,000 փր.։

ԲԻԲ. — Հրեշտակս, ձեր մասին ունեցած յարգանքս, և ձեր իմ մասին ցուցուցած լաւ վերաբերմունքը... ոտքդ պաղնեմ... քիչ մը մտածեմ (երթալու պէս)։

ԹՐԷՊ. — Օձիքը չեմ ձգեր... դուն սենեակդ քաշուէ աղջիկս (երկուքը կ'ելլեն)։

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ

Բ. ԱՐԱՐ

ՊԼԱՆՇ վերջը ՔԼԷՌ, ԲՐԻՏԷՆՎԱԼ

ՊԼԱՆՇ. —(Նստելով) ասոնք վաղելով այսպէս ո՞ւր գացին, չիտակը ըսելով բան մը չհասկցայ. բայց այս Պարոնը բաւական գեղեցիկ, շատ սիրուն է, չափազանց հաւնեցայ, պզտիկ աղ մօրուք մը ունի թունջին

վրայ. (այս միջոցին Բրիւտենվալ եւ Գլեռ մեկմեկ տղու գլխարկ բռնած ներս կը մտնեն):

ԲՐԻԻ. — (Կամաց մը Գլեռին) եկուր աղջիկս, կարելի է երեխան արթնցած է Ֆնուէրնիս տանը։

ԳԼԷՌ. — Բանած գլխանոցս հոս է։

ՊԼԱՆՇ. — Նորէն այս Պարոնը։

ԲՐԻԻ. — Նայէ աղջիկս՝ մայրը — թղթախաղին մէջ շատ առաջին է եղեր — կեցիր քեզի ներկայացընեմ. (բարեւելով) Տիկին...

ՊԼԱՆՇ. — Պարոն (ինքնիրեն) ճանըմ այս մարդը ինչո՞ւ համար զիս տիկին կը կոչէ։

ԲՐԻՊ. — (Գրպանին տուփը երկնցնելով) քթախոտ մը կը քաշէ՞ք, Տիկին...

ՊԼԱՆՇ. — Շնորհակալ եմ, չեմ գործածեր։

ԲՐԻԻ. — Ա՜հա՛, աղջիկս... Գլէռ, Բրիւվէնտալ... Ռէմցի... նշանած է։

ՊԼԱՆՇ. — Որո՞ւ։

ԲՐԻԻ. — Ձեր տղուն, Պարոնին։

ՊԼԱՆՇ. — Ես տղայ չունիմ, Պարոն։

ԲՐԻԻ. —
ԳԼԷՌ. — } Ի՞նչպէս, ի՞նչ ըսիք։

ՊԼԱՆՇ. — Կը սխալիք Պարոն... ես տակաւին ամուսնացած չեմ։

ԲՐԻԻ. — Օ՜... Ներողութիւն... մենք կը կարծէինք թէ դուք անոր մայրն էք... պզտիկը չարթընցաւ տակաւին...

ՊԼԱՆՇ. — Ի՞նչպէս պզտիկ...

ԲՐԻԻ. — Զարմանալի բան, այս կինն ալ բանէ մը տեղեկութիւն չունի, (բարձր) այսինքն փեսացուս Թրէպուշարտին աղջիկը...

ՊԼԱՆՇ. — Աղջի՞կը մի... անոր աղջիկը ես եմ։

ԳԼԷՌ. — Ամմա ըրիք ա՛.

ԲՐԻԻՏ. — Վա՜յ... միւսիւ Թրէպուշարտին պըզ-

տիկ աղջիկը դո՞ւն ես... զարմանալի բան, ես ալ իբրեւ նուէր... հապա աղջկանս բանած գլխանոցը։

ՊԼԱՆՇ. — Ի՛նչ ըսիր։

ՔԼԷՌ. — (Գրպանը դնելով) ոչինչ, բան մը չէ։

ԲՐԻԻ. — Բայց դուք ձեր հօրմէն մնած կ'երեւաք, այսինքն ան ձեռնէ երիտասարդ է, այսինքն դուք անկէ...

ՊԼԱՆՇ. — Այո, Պարոն, շատ քիչ տարբերութիւն ունինք, ես մօրս առաջին ամուսնութեանը ծնած եմ։

ԲՐԻԻ. — Հա՛, սանկ ըսէ, (Քլէռիցն) հիմա հասկըցուեցաւ, (Պլանշիցն) ըսել է հիմա դուք աղջկանս աղջիկը պիտի ըլլաք։

ՊԼԱՆՇ. — (Զարմացած) ե՞ս։

ՔԼԷՌ. — (Բարկացած) ո՛չ, հայր իմ, ո՛չ, ես չեմ ընդունիր։

ԲՐԻԻ.—Ի՞նչպէս աղջիս, քանի որ հօրը հետ պիտի ամուսնանաք, կարելի է որ մայրը չըլլաք։ Քիչ մը զարմանալի պիտի ըլլայ, բայց ինչ ընեմք աղջիկս, ալ ձեզի մինակ պիտի թողում, բժիշկին տունը պիտի երթամ, մնաք բարով աղջիկս։

ՔԼԷՌ. — Հայր, ինծի մի ձգեր, ես ալ միասին պիտի գամ։

ԲՐԻԻ. — Ըլլար աղջիկս, դուք հոս մնացէք, քանի որ աղջիկդ պիտի ըլլայ՝ նատէ, հետը տեսնուէ։

ՔԼԷՌ. —(Պլանշիցն նայելով) անկարելի է հայր։

ԲՐԻԻ. — (Իսկիրեն Պլանշիցն նայելով) քիչ մը անցած է ամմա՝ դէշ ապրանք ալ չէ, (Պլանշիցն), քթախոտ կը քաշէ՞ք Օրլոորդ։

ՊԼԱՆՇ. — Պարոն...։

ԲՐԻԻ. — Մնաք բարով Օրլոորդ, տեսնուեցէք, ժամանակ անցուցէք (Բրիւտենվալ մեկ հողմ կ'երթայ, Պլանշ ալ իր սենեակը կը քաշուի)։

ՏԵՍԻԼ 2

ԲԼԷՌ, վերջը ԹՐԷՊՈՒՇԱՐՏ

ԲԼԷՌ. —(Բարկութեամբ) զարմանալի բան է այս, Թրէպուշարտ մեզի կատակ կ'ընէ, այս առաւօտ էր տակաւին կաթէն չէ կտրուած կ'ըսէր. մեզի խաբելը ի՞նչ պիտի ըլլայ. լմնցաւ, ամէն բան լմնցաւ, հայրս գալուն պէս (իր սենեակը երթալու կ'ելլայ):

ԹՐԷՊ. — (Գլխուը չտեսնելով) ամա պինթ գլուխ մարդ է եղեր հա՛, մոռածելու համար 10 վայրկեան միջոց կ'ուզէ կոր։

ԲԼԷՌ. — (Դռան առջին) ա՛յ, դուք էք, Պարոն Թրէպուշարտ։

ԹՐԷՊ. — (Բարեւելով), Օրիորդ, սենեակնիդ թէւ քիչ մը փոքր է, բայց օդաւէտ է։ Ի՞նչպէս հաստատուեցաք։

ԲԼԷՌ. — Ի՞նչ փոյթ հաստատուելս, Պարոն ձեր աղջիկը տեսայ։

ԹՐԷՊ. — (ինքնիրեն) ուրա՛խ, ձեռքս դոլալ սկսաւ։

ԲԼԷՌ. — Պարոն, չէիք գիտեր որ ես այս երիտասարդ տարիքիս մէջ պառաւի մը մայր չեմ կրնար ըլլալ։

ԹՐԷՊ. — Անհոգ եղիք Օրիորդ, ես անիկա Հօրան պիտի դրկեմ, պիտի ամուսնացնեմ։

ԲԼԷՌ — Ըսել է թէ ես ալ զոքանչ պիտի ըլլամ։

ԹՐԷՊ. — (Ծեռքը ճակտին տանելով) չիտակ է, ես այդ չմտածեցի։

ԲԼԷՌ. — Կը ցաւիմ որ մեր ամուսնութիւնը չպիտի իրականանայ. (դէպ ի խորը կ'երթայ։

ԹՐԷՊ. — (Ձայն հեռացնելով) ի՞նչ ընելու է։

ՖԼԷՌ. — Ձեմ գիտեր, քանի որ այդ աղջիկը, մեր ամուսնութիւնը անկարելի է (դուռնեն) անկարելի է Պարոն, ո՛չ, ո՛չ, անկարելի է (սենեակ կը մտնե):

ՏԵՍԻԼ 3.

ԹՐԷՊՈՒՇԱՐՏ, վերջը ԲՐԻՏԷՆՎԱԼ

ԹՐԷՊ. — (Վեր վար պտտելով) Եա ասկէ չպի՞տի կրնամ աղատիլ։ Ուրիշին աղջիկը ըլլալովը ինծի արդելք ըլլայ. անանկ է եա, ես անոր ինչն եմ, և ոչ մէկ բանը. Պլանշը իմ ինչս է, և ոչ մէկ բանս, ոչ աղգականս և ոչ բան մը. Ֆլէռը՝ ես ասոր մայրը չեմ կրնար ըլլալ ըսաւ. շատ չիտակ է, իր մօրը տարիքը եղող աղջկան մը ինչպէս մայր կ'ըլլայ. ա՜հ, ա՜հ, իրաւ միտքս բան մը ինկաւ, Պլանշը Ֆլէռին մայրը թող ըլլայ, եղաւ գնաց. անիրհայրս ամուրի է. այո, Պլանշը անոր հետ կ'ամուսնացնենք վէստէլամ, եղաւ գնաց. ահա ինքն ալ կուգայ։

ԲՐԻԻ. — Ա՜հ, բարեկամս ալ կարողութիւնս չի մնաց։

ԹՐԷՊ. — Ի՞նչ կայ, ի՞նչ եղաք։

ԲՐԻԻ. — Բարկութենէս պիտի ճաթիմ, անանկ մէկը որ՝ ամէն օր կէս օրէ առաջ տունը գանուիլը կը յայտարարէ։

ԹՐԷՊ. — (Ինքնիրեն) ի՞նչպէս սկսելու է։

ԲՐԻԻ. — Տուն կ'երթամ, դուռը կը զարնեմ, դէմս ծառայ մը կ'ելլէ, Միւսիւ Տօքթէօրը տունն է. ո՛չ Պարոն, Կիրակիէն ի վեր է Անիէր գացած է չըսէ՞ մի, եկուր տէ հիմա մի ճաթիր։

ԹՐԷՊ. — (Ինքնիրեն) Պլանշին համար... արդեօք ըսեմ թէ քեզի վերջին ատիճան հաւներ է և սիրահարեր է։

ԲՐԻԻ. — Մինչեւ վաղը սպասել հարկ պիտի ըլլայ, հիւանդութիւս ըսես նէ երթալով կը սաստկանայ կոր, ուրիշ կարող տօթէօր չկայ արդեօք այս կողմերը (կը նստի)։

ԹՐԷՊ. — (Ինքնիրեն) յարմարցնեմ նէ շատ բան. եթէ կը փափաքիք անգամ մը ձեզի զննեմ, քննեմ, և ձեզի տեղեկութիւն տամ ձեր հիւանդութեան մասին։

ԲՐԻԻ. — Վա՜յ, դուք բժիշկ էք։

ԹՐԷՊ. — Ձեր այս հարցմանը կը զարմանամ։ Ճիշտ ինը տարի աշխատեցայ (ինքնիրեն) տկռայի բժիշկ անգամ չկրցայ ըլլալ։

ԲՐԻԻ. — Իրաւունք ունիք Բէմ, եկած տեղունիդ շարունակ կը գրուցէիք, բայց ես մոռցած էի այդ կէտը։

ԹՐԷՊ. — Ես այնպէս գլխու ցաւի պէս փոքր հիւանդութիւններու կարեւորութիւն չեմ տար. ես ընդհանրապէս ծանր հիւանդութիւններու կը նայիմ։

ԲՐԻԻ. — Հա՛, իմ հիւանդութիւնս ալ արդէն ծանր տեսակէն։

ԹՐԷՊ. — Անգամ մը ձեր բազկերակը քննեմ։

ԲՐԻԻ. — Ահա՛, (լեզուն կը հանէ) մեր գիւղը լեզուէն կ'սկսին։

ԹՐԷՊ. — Եա՛, (երեսը նայելով) այս ինչ է։

ԲՐԻԻ. — Ի՞նչ կայ որ։

ԹՐԷՊ. — Բազկերակդ շատ արագ կը զարնէ կոր։

ԲՐԻԻ. — (Վախնալով) Ատուած իմ։

ԹՐԷՊ. — Ամուսնացած ատենդ քանի տարեկան էիր։

ԲՐԻԻ. — 29 տարեկան, 9 ամսու, 16 օրուան, և 7 ժամուան էի։

ԹՐԷՊ. — Դէշ, Պարոն, դէշ,

ԲՐԻԻ. — Ես արդէն գիտէի, ինծի ամուսնանալ չէը գար.

ԹՐԷՊ. — Ընդհակառակը, Պարոն, այդ սխալ դաղափար է։

ԲՐԻՆ. — Խօսքը մէջէրնիս, ամուսնոյս մեռնելէն վերջը մէյ մըն ալ չամուսնանալու համար երդում ըրի։

ԹՐԷՊ. — Ի՞նչպէս. երդո՞ւմ մի ըրիք. բայց կեցէք քիչ մը բաց պիտի խօսիմ. ներողութիւն։

ԲՐԻԻ. — Մի քաշուիք հոգ չէ։

ԹՐԷՊ. — Ինքզինքնիդ կնոջ մը հետ սալօնի մը մէջ միայնակ գտնէք նէ, ի՞նչ կը զգաք։

ԲՐԻԻ. — Ե՞ս, սկամպիլ խաղալու փափաք մը կը զգամ։

ԹՐԷՊ. — Այսչափ միայն։

ԲՐԻԻ. — Անանկ է եա՛. ուրիշ ի՞նչ բան պիտի զգամ։

ԹՐԷՊ. — (Ինքնիրեն) սա սառի կտորը ինչպէս տաքցնելու է. (բարձր) ներողութիւն. (Բրիւտենվալին կուրծքին կը զարնէ մտիկ կ'ընէ, ամէն զարնելուն Բրիւտենվալ վեր կը ցատկէ)։

ԲՐԻԻ. — (Վախով) ի՞նչպէս... բան մը կը հասկընաք կոր։

ԹՐԷՊ. — Ամէն բան... ամէն բան...

ԲՐԻԻ. — Ի՞նչ է եղեր...։

ԹՐԷՊ. — Բարեկամս... համարձակ եղէք... դուք շատ ծանր հիւանդութեան մը ենթակայ եղած էք։

ԲՐԻԻ. — Ամա՜ն, Պարոն... ո՞ւր տեղուանքս...

ԹՐԷՊ. — Ամէն կողմերնիդ։

ԲՐԻԻ. — Է՜յ... սառը դեղը... ճարը չկայ։

ԹՐԷՊ. — Այս հիւանդութիւնը ունեցողներէն 8էն 10 մեռան...

ԲՐԻԻ. — Էյ... տասնըմէկերորդը ի՞նչ եղաւ։

ԹՐԷՊ. — Ան ալ դժուարաւ ազատեցի։

ԲՐԻԻ. — *Ի՞նչ բանով...*

ԹՐԷՊ. — *Ի՞նչ բանով մի. կարծեմ թէ դուք չը պիտի ընդունիք։*

ԲՐԻԻ. — *Այդ դեռը շատ լեղի է, Պարոն։*

ԹՐԷՊ. — *Օ՜հ, չափէն աւելի լեղի... ես ան տասնըմէկերորդը ամուսնացնելով աղատեցի։*

ԲՐԻԻ. — *Ամեն իրաւ կ'ըսէք.* (գաւազանը եւ գլխարկը առնելով դէպ ի խորը կը վազէ)։

ԹՐԷՊ. — (Օձիքեն բռնելով) *ո՞ւր կ'երթաք։*

ԲՐԻԻ.—*Գիւղ պիտի վերադառնամ դեղը գտնելու։*

ԹՐԷՊ. — *Գիւղ երթալու ի՛նչ հարկ կայ։*

ԲՐԻԻ. — *Բայց, Պարոն, հոս մէկը չեմ ճանչնար, ո՛վ առնեմ...*

ԹՐԷՊ. — *Ես ձեր... դեղը դասայ, Պարոն։*

ԲՐԻԻ. — *Օ՜հ, իրաւ կ'ըսէք։*

ՏԵՍԻԼ 4.

ՆՈՑՆՔ ԵՒ ՊԼԱՆՇ

ԹՐԷՊ. — (Պլանշը դիմաւորելով) *եկուր աղջիկս,* (կամաց) *դլուխդ վեր վերցուր, քովընտի կեցիր.* (բարձր) *Պլանշ... այլեւս ամուսնանալու ժամանակդ եկաւ, քեզի յարմար ամուսին մը գտայ. անուանեմ* (Բրիւսեենվալը կը ցուցնէ, երկուքը իրար կը նային եւ իրարու ա՜հ պօռալով մեկդի կը քաշուին)։

ԹՐԷՊ. — *Թապլօ...*

ՊԼԱՆ — *Հայրը, ասիկա շատ անցած է։*

ԲՐԻԻ. — *Այս դեղը շատ լեղի է...*

ԹՐԷՊ. — *Իրարմէ տարբերութիւն չունիք, մէկ աստիճանի վրայ էք, (մէկ այար էք).*

ՊԼԱՆՇ. — *Բայց հայրը իմ, միւս Պարոնին խօսք տուինք, չէ։*

ԹՐԷՊ. — *Օ՜, Բիքուազօն, անիկա սրիկային մէկն է, իր կարերը կարող Գօրին անունով աղջկան մը հետ գործը յարմարցուցեր է։*

ՊԼԱՆՇ. — *Բայց, հայր դուք կը զրպարտէք զայն...*

ԹՐԷՊ. — *Աղջիկս, անիկա քեզ չի սիրեր կոր, ան այլեւս չպիտի գայ.* (ներսէն Բիքուազօին ձայնը) :

ՊԼԱՆՇ. — *Ահա ինքը։*

ԹՐԷՊ.— (Ինքնիրեն) *վա՜յ. սատանան տանի դինքը։*

ՏԵՍԻԼ 5.

ՆՈՑՆՔ ԵՒ ԲԻՔՈՒԱԶՕ

ԲԻՔ. — *Օ՜հ... եղաւ լմնցաւ, որոշումը տուի...* (Պլանշին քովը երթալով) *Օրիորդ... հրեշտակս...* (մէկէն իմէկ երեսը ամբողջ տեսնելով, մէկէն իմէկ ես կը քաշուի *ո՜հ, Աստուած իմ։* (Կ'երթայ քօնեակ մը կը լեցրնէ, կը խմէ :

ՊԼԱՆՇ. — *Ա՜հ... ըմպելի կը գործածէ եղեր...* (Բրիւսէնվալին վազելով եւ ձեռքը երկարելով) *Պարոն, ինծի հետ ամուսնանալու կը հաւանի՞ք։*

ԲՐԻԻ. — *Ա՜, ... Օրիորդ, ամենայն սիրով... քթախոտ կը քաշէ՞ք Տիկին։*

ՊԼԱՆՇ. — *Ամենայն սիրով,* (կը քաշէ) :

ԹՐԷՊ. — (Ձակատը սրբելով) *օ՜հ... վերջապէս այս ծանր բեռը վրանուս նետեցինք...։*

ՏԵՍԻԼ 6.

ԱՌԱՋԻՆԲ, ՓԼԷՌ, ՐԱԿՕՖԻՆ

ՓԼԷՌ. — (Ծrարնեբը Բակօֆինին ձեռքը տուած բլլալով, սենեակեն դուրս կ'ելլէ) *հայրիկ, աճապարէ, շոգեկառքին հասնինք, մեր գիւղը վերադառնանք։*

ԹՐԷՊ. — *Ծրարնիդ ձգեցէք, Օրիորդ, ամէն բան կարգադրուած է։*

ՊԼԱՆՇ. — *Այո՛, մայր։*

ՓԼԷՌ. — *Դարձեալ։*

ԹՐԷՊ. — *Ո՛չ, ոչ, այլեւս անոր պէտք է աղջիկս կոչէք։*

ՓԼԷՌ. — *Ի՞նչպէս... ի՞նչ ըսիք։*

ԹՐԷՊ. — (Պլանշը ներկայացնելով) *Տիկին Բրիւտէնվալը ձեզի կը ներկայացնեմ.* (կամաց մը Փլէռին) *դուք զայն աղջիկդ չընդունեցիր, բայց ես ալ զայն ձեզի մայր անուանեցի...*

ՓԼԷՌ. — *Ի՞նչպէս հայր իմ...*

ԲՐԻԻ. — *Ներողամիտ դտնուեցէք աղջիկս, ես Օրիորդը իբրեւ գեղ առի գեղ...*

ԹՐԷՊ. — *Այնպէս մի ըսէք փեսաս...*

ԲՐԳԻ. — (Ինքնիրեն) *ի՞նչ թօհաֆ բան, գործերնիս ղինճիրլէմէ եղաւ, թուխալի պէս խաթմէրլի... ան իմ փեսաս, ես ալ անոր փեսան...*

ԹՐԷՊ. — Գլէռին) *ահաւասիկ Պլանշը ձեր մայրը եղաւ, դուք ալ իմ ամուսինս պիտի ըլլաք։*

ՓԼԷՌ. — *Ամենայն սիրով Պարոն...*

ԲԻԳՈՒԱՋՕ. — *Ազէկ սամ, ես ի՞նչ պիտի ըլլամ։*

ԲՐԻԻՏ. — *Դուն ալ քօնեակդ խմէ, պառկէ։*

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

15 ՕՐԷՆ

ՎԻՌԻ ՊԱՆԴՈԿԻՆ ՍՊԱՍԱՒՈՐԸ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

		Դրց.
Ակնոցի Հաճի Աղան	Յ. Յ. Ամիրեանց	40
Արշին Մալ Ալան		15
Անուշ		25
Անձնուէր Ընկերը		50
Լէպլէպիճի		30
Շատախօս Սափրիչը		15
» » » Հայատառ Թուրքերէն		25
Ասիացի Սափրիչը	Յ Պապէսեան	10
Ամերիկահայ Փեսացուն կամ Տայը Կարապետ		25
Բարեկենդանի Անկուտինները		15
Դղումի Վաճառականը		15
Երանոս Աղբար	Տ. Փափազեան	25
Երկու Խուլեր	Մոլիէր	15
Թիք Թաք		10
Կրլ Աքառթ կամ Մատս Մէջն է	Ե. Թօլաեան	50
Մարիամ Մագթաղենացի	Լ. Ծիծաղ	50
Սատանայ		10
Սիքլօբ		10
Գողը	Տ. Միրբօ	15
Հնարամիտ Վարձակալը		10

Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Գրատունը կը հայթայթէ Դըպրոցական, Վիպական, Թատերական, Պատմական, Բանաստեղծական ամէն տեսակ Հայերէն գիրքեր և այլն, և այլն։

Հասցէ՝

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի, Ըէշիտ էֆ. խան

-60 P.

A II 2960

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220029609

A 29503